

ելքի համար յօրինած։ Այս երկուսի մասին էլ մենք կը խօսենք
առանձին առանձին։ և միայն դրանց յետոյ կը պարզուի ժա-
մանակակից թիւրբիայի իսկական պատկերը։

Ողուզէն թերբերեան-

(Կը շաբանակուի)

ՆՈՒԷՐ ՕՐ. N. N.

«ԵՐԱՆԻՇ, ով ձգուում է զէպի աստղերը»,
ՄԵՃՆ ԲՐԱՅԻՄ

Դու անցորդի պէս քեզ միայն զգա՞,
Եւ որպէս ճամբորդ այս երկրի վրայ՝
Ազատ հայեացքով նայիր ամենքին.
Եւ անվերջ քայլէ քու անյայտ ուղին։
Սիրտդ սրբազան վշտով թաթախիր,
Հեռաւոր ափեր գնա, թափառիր,
Անյազ որոնիր մի վեհ ընկերի,
Սիրէր, բայց սիրուն մի՛ լինիր գերի,
Սիրէր, բայց և թնդ, և նորից գնա՞
Մոայլ ու մենա՛կ—աշխարհիս վրայ։
Հոգիդ մըրըրկիր խորին մտքերով.
Սիրտդ թնդ այրուի վսեմ երգերով.
Եւ երազ մի վառ, շքեղ, սուրբ և վեհ
Այս հողի երկրից հոգիդ թոցնէ.
Կարօտով ձգտիր աստղերին անշէջ
Եւ մեռիր աստղէ ոլորտների մէջ։

* * *

Անապատում, միրաժի մէջ մի բեղուին
Շողքն է տեսնում մի աղջկայ գեղեցիկ.
Եւ վնդուում է հոգեսլաց, տենչագին
Ծովկարօտով այն աղջկան գեղեցիկ։

Եւ ծարաւուտ անապատի հրավառ
Տատասկներում, արևի տակ բոցափայլ
Փնդուում է նա նըրան անվերջ, անդադար
Եւ մեռնում է վեհ սիրոյ մէջ հոգեզմայլ:

Եւ քնի մէջ՝ աննիւթական, անվախճան,
Տեսնում է նա այնպէս քնքնւշ ու սիրուն
Շողքը չքնաղ այն նազելի աղջկան
Եւ փնդուում է նըրան յաւէրժ երազում...

Աւ. Իսահակեան

Օ Բ Ե Ր Լ Է Ն Ե Ր Ը

Վ. Է. Պ

Ռընէ Բազենի

(Թարգմանութիւն Փրանսերէնից)

I

Փետրուարի գիշերը Ալզասում.

Լուսինը բարձրացաւ Հոենոսի մէգերի վրայ: Այդ ժամին
Վոժի լեռնային արահետով մի մարդ էր իջնում, մի յայտնի
որսորդ՝ յայտնի շրջիկ, որից ոչինչ չէր խուսափում: Նա նկա-
տեց լուսինը թաւուտ անտառակի բացուածքից, թէև անմիջա-
պէս յետոյ մարդը ծածկուեց եղենիների ստուերում, բայց այդ
մի հատիկ հայեացքը, որ ցանցառ ծառերի արանքից նա նե-
տեց պայծառ գիշերուայ վրայ, բաւական եղաւ ըմբռնելու շըր-
ջապատող բնութեան գեղեցկութիւնը: Համոյքի մի դող անցաւ
ճանապարհորդի մարմնով: Եղանակը ցուքա էր և խաղաղ: Զո-
րերից բարձրացող նօսր մառախուղը՝ ծաղիկների ու եղակի
բուրմուճի փոխարէն տարածում էր ոետինի, թօշնած տերե-
ների, կանաչ խոտերի, ծառերից պլոկուած թարմ եղեների
անուշահոտութիւնը: Մառախուղի մէջ զգացւում էր նաև այն